ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/3499/02/24 քաղ. Երևան
5 Հունիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արշակ Պետրոսյանի, ծանոթանալով «ԳԻՆԳԿՈ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՀՄ-ի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ «ԳԻՆԳԿՈ» սահանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 04.04.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

ՊԱՐԶԵՑ

Հայցվոր «ԳԻՆԳԿՈ» ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «ԳԻՆԳԿՈ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՀՄ-ի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ «ԳԻՆԳԿՈ» սահանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 04.04.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատավոր Ե. Եսոյանի

13.05.2024թ. որոշմամբ վերադարձվել է:

Հայցվոր «ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմումը կրկին դատարան է ներկայացրել եռօրյա ժամկետում, որը էլեկտրոնային համակարգի միջոցով 14.05.2024թ. մակագրվել է դատավոր Ա.Պետրոսյանին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 15.05.2024 թվականին, որը Դատարանի 20.05.2024թ. որոշմամբ վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը եռօրյա ժամկետում կրկին ներկայացրել է, որը էլեկտրոնային համակարգի միջոցով Դատավոր Ա. Պետրոսյանին է մակագրվել 30.05.2024թ., որը հասանելի է դարձել 31.05.2024թ.:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200, 234.5 հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԳԻՆԳԿՈ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՀՄ-ի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ «ԳԻՆԳԿՈ» սահանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 04.04.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և համարել ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3. Թիվ ԵԴ2/3499/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. հուլիսի 18-ին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by PETROSYAN ARSHAK 1303730265 **Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am